


### Կ'ՕԳՆԵ՞Ս ԿԱՐԻՔԱՒՈՐԻՆ

Սի տրտմիր, որ հարսուութիւնն կը պակսի, որովհետեւ նոյնքան ալ մեղքերդ կը պակսին, երբ դրամը կը հեռացնես քեզմէ, նաեւ մեղքերդ կը հեռացնես եւ քո պիտի գործերուդ աղտոտութենէն կը սրբուի, ինչպէս կ'ըսէ Տէրը. «Ինչ որ կրնաք տուեք իբրև ողորմութիւն եւ ահա ամէն ինչ մաքուր պիտի ըլլայ ձեզի համար»: (Ղուկ.11.41): Ողորմածին մարմինը ողորմութեամբ կը սրբուի, հոգին եւս կը սրբուի, ինչքերը կ'օրինուին, յաջող աշխատանք կ'ունենայ, արջառը կ'աճի, ոչխարներուն հօտը կը բազմապատկուի եւ արտերը կը պատղաբերին, եթէ երբեք աղորմութիւն ընէ: Աստուծոյ կամքով, որովհետեւ երբ աղքատներուն ողորմութիւն կ'ընես, զայն Աստուծոյ փոխ կու տաս եւ Աստուած ասոր փոխարէնը կու տայ ո՛չ միայն այն, որ լաւ վերը, այլեւ՝ ողորմածին կու տայ արքայութիւն, կը փրկէ զայն թշնամին որոգայթներէն եւ կ'ազատէ դժոխքէն: Թէեւ մեծ սրբութիւն է կուտարինը, սակայն աւելի պատուական է ողորմութիւնը: Թէեւ մեծ է պահեցողութիւնը, մեծ են բազմաթիւ առաքինութիւնները, սակայն ողորմութիւնը աւելի մեծ է եւ կարեւոր ու Աստուծոյ ընդունելիք: Ողորմած մարդը մեծ է եւ պատուական: Ան որ ողորմութիւն չ'ըներ, Ս. Գիրքը այդպիսին մարդ չ'անուաներ, այլ՝ շուն, խոզ եւ գազան, որ միայն կ'ուտէ: Արդարեւ, նման մարդիկ ճրագ են՝ առանց լոյսի, աչք են՝ առանց տեսութեան, որոնք անուն ունին միայն՝ բայց ոչ օգտակարութիւն:

### ՀԱՅՑ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼԱՎԱՐԻ ԽՐՀՀՈՒԹԻՒՆ ՀՎԱԼԱՎՈՒՄ

#### 2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՐԱՍՅԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՎԱՎՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Ապա բարձրացնելով Աստուածորդուոյն պատարագեալ Մարմինը եւ մարդու մեղքերուն համար թափաւած Արեան բաժակը, կը դառնայ ժողովուրդին եւ կը թելադրէ.-

«Սրբութեամբ ճաշակենը մեր Տիրոջ եւ Փրկիչն՝ Յիսուս Քրիստոսի սուրբ եւ բանկագին Մարմինէն ու Արինէն, որ երկինքէն իջած՝ մեզի կը բաշխուի:

Ասիկա կեանք է, Յարութեան Յոյս, եւ մեղքերու քաւութիւն ու բողութիւն:

Սահմու երգեցէր Տիրոջ, մեր Աստուծոյն: Սահմու երգեցէր մեր երկնաւոր, անմահ բազաւորին, որ քերովէական կառքի վրայ կը նստի»...

Ծարունակելի



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԾԱՒՇԵՐՈՒՄ ԼՂՅԱ  
(Ա. 119.105)

Ժ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 2 ՓԵՏՐՈՒԱՐ 2025

Ժ-Ի-5

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԹԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԺԵՐՑՈՒՄՆԵՐ  
Ես. 62.1-11: Ա. ՏԱ. 2.15-19: Յհ. 6.39-47

### ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

#### ԸՍ ՅՈՎՐԱՆՆԵՍԻ 6.39-47

Սեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.

«Զիս զրկող Հօրս կամքն է, որ չկորսանցնեմ ոչ իսկ մէկը բոլոր անոնցմէ՝ որոնք ինձի տուաւ, այլ՝ յարուցանեմ զայն վերջին օրը: Հօրս կամքը հետեւեալն է. ով որ տեսնէ Որդին եւ հաւատայ անոր՝ յախտեանական կեանք կ'ունենայ եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը»:

Հրեաները սկսան տրտնջալ իրեն դէմ, որովհետեւ ըսած էր, թէ. «Ես եմ երկինքէն իջած հացը», եւ կը հարցնեին. «Այս մարդը Յովսէփի որդին Յիսուսը չէ», որուն հայրն ու մայրը կը ճանչնանք: Ինչպէս ուրեմնն կ'ըսէ. «Ես երկինքէն իջայ»: Յիսուս անոնց պատասխանեց. «Կը բաւէ դուք ձեզի քրթմնջէք: Ուեւ մեկը չի կրնար ինձի գալ, եթէ զիս զրկող Հայրը զայն ինձի չքերէ եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը: Մարգարեւութիւններուն մէջ զրուած է. “Ամէն մարդ Աստուծմէ սորված պիտի ըլլայ”»: Ով, որ Հօրմէս կը լսէ եւ իրմէ, կը սորվի ինձի կուգայ: Ոչ ոք Հայրը տեսած է, բացի անկէ որ Աստուծմէ է, որովհետեւ միայն անիկա տեսած է Հայրը: Ու ես կ'ըսեմ ձեզի. ով որ ինձի հաւատայ՝ յախտեանական կեանքը կ'ընդունի»:

Որպէսզի կարենանք փրկուի, անհրաժեշտ է Քրիստոսը հրաւիրել մեր կեանքերուն մէջ ո՛չ միայն իբրեւ Փրկիչ, այլեւ՝ իբրեւ Տէր: Նատեր զայն կ'ընդունին իբրեւ Փրկիչ, բայց անոր հետ չեն վերաբերի իբրեւ Տիրոջ: Քրիստոս Փրկիչն է այո՛, բայց միաժամանակ Տէր է: Ան Փրկիչ է, որովհետեւ մեզ փրկեց յախտեանական դատապարտութենէն եւ Տէր է, որովհետեւ մեզ ազատեց Սատանային տիրապետութենէն՝ որպէսզի ի՛նք ըլլայ մեր Տէրն ու մեր վրայ տիրապետողը: Երբ մէկ կողմէն կ'ընդունին իր Փրկիչ ըլլալը, բայց միւս կողմէն մեր կեանքին վերաբերեալ բոլոր որոշումները մենք է որ կ'առնենք, այդ կը նշանակէ՝ թէ Յիսուսի կամքն ու խօսքը չեն, որ կը տիրեն մեր կեանքերուն մէջ, այլ՝ մե՛ր կամքն ու խօսքը:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՈՆԵՐ

## ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒՅՑԱԲԱՆ

Եկեղեցոյ գերագոյն վարդապետներէն մին է Գրիգորը: Կապադովկիոյ Նազիանզ քաղաքէն էր: Որդին էր հեթանոս հօր եւ քրիստոնեայ մօր եւ այս վերջինին շանքով կանուխ ստացաւ քրիստոնէական դաստիարակութիւն: Յիսուն տարեկանին հայրն ալ մօրը շանքերով դարձաւ քրիստոնեայ եւ մկրտուեցաւ: Նազիանզու եպիսկոպոսը երբ մեռաւ, Գրիգորիս անունով մէկը կոչուեցաւ նոյն աքոնին եւ ձեռնադրութիւն ստացաւ Կեսարիոյ միեւնոյն եպիսկոպոսապետէն: Գրիգոր Աքէնքին մէջ իր ուսմանց ընթացքը աւարտելէ ետք Կ. Պոլսոյ ճամբով դարձաւ իր հայրենիքը, միշտ ինքզինք նուիրելով հոգեւոր պարապումներու:

Գրիգոր իր մօրը մահեն ետք բաշուեցաւ  
Խսաւրացւոց Սելիսկիա քաղաքը, Ս. Թէնկ-  
դի եկեղեցին: Այդ միջոցին Քրիստոսի  
եկեղեցին ծանր տագնապ մը կ'անցըներ  
մասնաւրաբար Արեւելքի մէջ, ուր Կոս-  
տանդիանոսի մահեն վերջ դարձեալ զօ-  
րացած էր Արիոսի աղանդը եւ մայրաքա-  
ղաքին հոգեւոր կեանքը գրեթէ բոլորովին  
անոնց ազդեցութեան տակ էր: 397-ին,  
Անտիոք գումարուած եպիսկոպոսաց ժո-  
ռով մը նկատի առնելով այս կացութիւնը,  
ստիպողաբար յանձնարարեց Գրիգորի՝  
Կ. Պոլիս երթալ եւ ուղղափառութիւնը  
պաշտպանելու համար իր կարելին ընել:  
Անվարան համակերպեցաւ անիկա այս  
յանձնարարութեան, եւ կուրծք տալով  
ամէն կերպ հակառակութեան՝ զորս  
աղանդաւրաները յարուցին իր վրայ յա-

շողեցաւ խորտակել անոնց զօրութիւնը, իր բարձրօրէն համոզիչ եւ պայծառ վարդապետութեամբ արժանանալով աստուածաբան տիտղոսին: Արիոսեանները, Մակեդոննեանները, Սաքելեանները եւ ուրիշ աղանդները, ամէնքն ալ սփանչացան իր պերճախօսութեննէն: Ամէն կողմ՝ տարածուեցաւ իր համբաւը, Հերոնիմոսի նման գիտուն գլուխ մը պատիւ համարեց աշակերտել իրեն: Այն ատեն մեծամասնութիւնը միացաւ եւ իրեն հետ ունենալով Աղեքսանդրիոյ Պետրոս պատրիարքի գրաւոր հաւանութիւնը, մայրաքաղաքին եպիսկոպոս կարգեց զինք: Բայց քիչ ետք, նոյնիսկ կարգ մը ուղղափառներու կամակցութեամբ, դարձեալ հակառակութիւն յարուցուեցաւ իր դէմ, եւ փոխանակ իրեն՝ Կ. Պոլսոյ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մաքսիմոս Աղեքսանդրացի: Բայց ժողովուրդը չհանդուրժեց այս անիրաւութեան, եւ բուռն թափով պաշտպանեց Աստուածաբանը: 380-ին երբ Թէոդոս կայսրը Կ. Պոլիս դարձաւ պատերազմներէն, դարձեալ զօրացաւ Գրիգորի դիրքը: Յաջորդ տարին, Կ. Պոլսոյ Տիեզերական ժողովին մէջ հաստատուեցաւ եւ յայտարարուեցաւ իր պատրիարքութիւնը: Սակայն կարճ ժամանակ ետք յաշաղկոտներու երեսէն, հարկադրուեցաւ հրաժարիլ վերջապէս մայրաքաղաքի եպիսկոպոսական արքունի եւ Նազիանզի մօտ, Արիազոն գիւղին մէջ ապրեցաւ առանձնական կեանք մը, ինքզինք նուիրելով եկեղեցական գրականութեան եւ մեռաւ 389 թուականին: Գրիգորի գործերը բազմահազար են: Այս գործերէն կարեւոր մասը թարգմանուած է հայերէնի:

ՀԱԳԵՒՄ  
ԴԱՏ ԳԱՍ

# ԱՐՆԵՑԱՌ ՉԱԶԲԵԴ ՏԻՐՈԶ ՅԱՎԵԶԱԼ

Աշակերտները Յիսուսի ըստն.  
ս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ  
ցէ եւ երկու ձուկէ» (Մտ. 14.17):  
ակերտները կը մտածէին, որ իրենց  
եցածը ոչինչ է: Բայց Յիսուս սոր-  
ուց անոնց իրենց «ոչինչ» նկատած  
ոգ հացերն ու երկու ձուկերը դնել իր-  
ամաղորութեան ներքեւ, որպէսզի  
«ոչինչ» նկատուած ուտելիքով  
ակրէ հսկայ բազմութիւն մը:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻ ԻՔ  
Հ ՈԳԵՒԹՈՐ ԴԱՍԸ

Երբեք չմտածենք, որ բան մը  
չունինք Տիրոջ բերելիք: Տերը մեզմէ մեծ  
բաներ չի պահանջեր: Իր պահանջածը  
մեզմէ մեր պատրաստակամութիւնն է,  
մեր փափաքն է, մեր կամեցողութիւնն  
է, բայց մանաւանդ, մեր ունեցած չնշին  
բանը իր տրամադրութեան ներքեւ  
դնելն է: Կը բաւէ, որ ուրիշին օգտակար  
դառնալու կամեցողութիւնը ունենանք,  
եւ մեր ունեցած չնշինը (Նիւթական թէ  
կարողութին իբրեւ) Աստուծոյ յանձ-  
նենք եւ ահա Աստուած մեզ պիտի զոր-  
ծածէ անօթի հոգիներ կշտացնելու հա-  
մար, մեծ կարիքներ զոհացնելու հա-  
մար:

## Տիրոջ կամքը օրինեալ ըլլայ:

**ԵԹԵ ԿԱՄ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...**

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԿԱՐԴԱՎ, ՍՊՆՄՈՒ 79

Ո՞վ դուն՝Հովհանքը քու ժողովուր-  
դիդ, ականջ տուր մեզի դուն՝ առաջ-  
նորդը քու հօտիդ, լսէ՛ մեզ, դուն՝ որ  
շերովբէներով շրջապատուած քու  
աթոռիդ կը նստիս, ինքպինքդ յայտ-  
նէ՛ Եփրեմի, Բենիամինի եւ Մանասէի  
շեղերուն դիմաց: Յո՛յց տուր զօրու-  
թիւնդ, եւ եկուր փրկէ՛ մեզ: Մեզ մեր  
տրկիրը վերադարձուր, ո՞վ Աստուած,  
մեզի հանդէպ բարեհաճ եղիր, եւ  
մենք պիտի փրկուինք: Ո՞վ Տեր,  
Ամենակալ Աստուած, դեռ մինչեւ  
ե՞րբ բարկութիւնդ պիտի ծխայ, եւ  
պիտի մերժես ժողովուրդիդ աղօթք-  
ները: Դեռ մինչեւ ե՞րբ արցունքով  
պիտի ուտենք մեր հացը, եւ արցունքը  
պիտի ըլլայ մեր ամբողջ խմելիքը:  
Դնչո՞ւ թոյլ կու տաս, որ դրացի  
ազգերը կուսախնձոր դարձընեն մեր  
տրկիրը, եւ մեր թշնամիները մեր վրայ  
անդան: Մեր երկիրը վերադարձուր  
մեզ, Ամենակալ Աստուած, մեզի  
հանդէպ բարեհաճ եղիր, եւ մենք  
պիտի փրկուինք: Եգիպտուեն հա-  
նեցիր ու Քանասան բերիր մեզ, քու  
որդատունկդ. բնիկ ազգեր վտարեցիր  
այնտեղէն, եւ անոնց տեղ զայն  
ունկեցիր: Տեղ պատրաստեցիր անոր  
համար, եւ զայն այնտեղ արմատա-  
ցուցիր, եւ անիկա ամբողջ երկիրը  
եցուց, լեռները անոր շուքին տակ  
ծածկուեցան եւ բարձրագոյն մայ-  
իներն իսկ անոր ուտերով ծածկը-  
եցան:

ՀԱՐՈՒՆԱԿԵԼ ՍՊՆՄՈՒՄ